

**ՄԴ նախկին մամուլի քարտուղար  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂՈՒԿԱՍԻ ՊԱՊԻԿՅԱՆ**



Ծն. 1944թ. դեկտեմբերի 1-ին, Վրաստանի Ախալցխայի շրջանի Ջուլդա գյուղում:  
1965-69թթ.՝ Երեւանի պետական մանկավարժական ինստիտուտի ուսանող:  
Ուսումնառության բոլոր տարիներին թղթակցում էր «Ավանգարդ», «Սովետական  
Վրաստան», «Պիոներ կանչ» եւ ինստիտուտի «Մանկավարժ» թերթերին: Այդ է  
պատճառը, որ ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի վերցրին «Մանկավարժ»  
բազմատիրաժում որպէս պատասխանատու քարտուղար:

1974-ից ռադիոյի երիտասարդական հաղորդումների խմբագրության խմբագիր,  
ավագ խմբագիր:

1979 թվականից հրավեր հեռուստատեսությունից՝ ուսումնական հաղորդումների  
խմբագրության բնական գիտությունների բաժնի վարիչ:

Համագործակցելով Մայր Աթոռի հետ, ստանալով Վազգեն Առաջին Վեհափառի  
օրհնությունը, 1990 թվականին բացում է «Խորան լուսո» հեռուստահաղորդաշար, որն  
հետո դառնում է գլխավոր խմբագրություն՝ Պապիկյանի գլխավորությամբ:

1996 թվականին «Նոր սերունդ» գլխավոր խմբագրության գլխավոր խմբագիր:

2000-2018թ. մարտ ամիսը՝ Սահմանադրական դատարանի մամուլի  
քարտուղար:

**Հեղինակել է՝  
գրքեր.**

1. «Ոգեղեն կյանք». 1998թ. (նվիրված Վազգեն Վեհափառին):
2. «Կարոտս կարոտիդ կարոտ». 2005թ. (նվիրված Հովհաննես Շիրազին):
3. «Ներշնչանք». 2007 (Բժիշկ Ասատրյան)
4. «Կարոտի ճամփաներ». 2008 (Ուղևորություն Արևմտյան Հայաստան)
5. «Ոգու հերկը» 2015 (նվիրված Վազգեն Վեհափառին)
6. «Ծանոթ անծանոթ Շիրազը». 2017
7. «Կիսատ անուրջներ». 2017 (Վաղամեծ բանաստեղծ Ֆելիքս Պետրոսյան)
8. «Մահարու վերադարձը» 2017 (Աբու Լալա Մահարի)
9. «Նեղ դուռ» 2017 (Նվիրված Ֆելիքս Պետրոսյանին)
10. «Անհատը և իր ժամանակը» 2018 (նվիրված Գագիկ Հարությունյանին)
11. «Զրույց... քեզ հետ» 2018 (կալանավայրից ստացած նամակներ)

### **Գրքեր համահեղինակությամբ՝**

«Լույս» (2010), «Իրիկնահացի հրավեր» 2014, «Բարի հիշեք ինձ ձեր սրտում», «Ո՞ւմ համար ես վառվում, լույս» 2010, «Հովհաննես Շիրազ» 2014, «Է՛ն ուրիշ Ֆրունզիկը» 2015, «Լևոն Միրիջանյան» 2016:

### **Ֆիլմեր՝**

«Հենրիկ Մալյան» 1983, «Իրիկնահացի հրավեր» 1989, «Շիրազյան մասունքներ» 1990, «Օհան Դուրյան» (երկու ֆիլմ) 1991, «Հայրիկ Մուրադյան» 1992, «Գագիկ Հարությունյան» 1997, «Ոգու հերկը» 2000 (նվիրված Ռաֆայել Պապայանին):

### **Խմբագրած գրքեր՝**

1. «Շարունակվող երկխոսություն» (Գագիկ Հարությունյան) 1999,
2. «Ի սկզբանե էր... վերջը» (Գագիկ Հարությունյան),
3. «Հայկյաններ» 2009 (Լևոն Միրիջանյան):

Հայաստանի ժուռնալիստների անդամ

Հայաստանի գրողների միության անդամ

### **Արժանացել է**

«Համո Սահյան», «Հովհաննես Շիրազ», ժուռնալիստների միության «Մասնագիտությանը հավատարիմ» հուշամեդալների:  
Ամուսնացած է, ունի երկու զավակ, չորս թոռ: